Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 7-ի N 109 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) բխում է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի ապրիլի 16-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-52-Ա կարգադրության պահանջներից և նախատեսվում է իրականացնել 2013-2014 թվականների ընթացքում:

2. Ծրագրային միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է ոստիկանության գործունեությունը դարձնել ավելի թափանցիկ, ընդլայնել ոստիկանություն-հասարակություն կապը և համագործակցությունը: Մասնավորապես, համայնքային ոստիկանության գործելաոճի ներդրման հիմնական նպատակներից մեկը հենց հասարակության հետ անմիջական կապի և համագործակցության ամրապնդումն է, որի դրական արդյունքներն արդեն իսկ տեսանելի են: Ծրագրով նախատեսվում է համայնքային (համայնքամետ) ոստիկանության մոդելի ներդրում հանրապետության ամբողջ տարածքում:

3. Ոստիկանության գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև հասարակության կողմից ոստիկանության հանդեպ ունեցած վստահու-

թյան աստիճանով: Այդ կապակցությամբ բազմաթիվ միջոցառումների համակցության դեպքում ծրագրի կարևոր խնդիրներից է հասնել ոստիկանության հանդեպ ավելի բարձր հանրային վստահության: Ծրագրի կարևորագույն նպատակներից է նաև հասարակական անվտանգության առավել արդյունավետ և նոր տեխնիկական միջոցների օգտագործմամբ ապահովումը:

4. Ոստիկանության գործունեության ընթացքում դեռևս առկա խնդիրները լուծելու նպատակով ծրագրի շրջանակներում ամրագրվել են ոստիկանությունում բարեփոխումների հետևյալ հիմնական ուղղությունները՝

1) ***կառուցվածքային և կազմակերպական ոլորտի բարեփոխումներ,*** որով նախատեսվում է ստեղծել նոր ստորաբաժանումներ, ամբողջ հանրապետությունում ներդնել համայնքային ոստիկանության մոդելը, կառուցել համայնքային ոստիկանության նոր հենակետեր, հստակեցնել ոստիկանությունում անցումը հատուկ քաղաքացիական ծառայության, կատարել ոստիկանության ծառայողների հաստիքների վերաբաշխում.

2) ***հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ***, որով նախատեսվում են համապատասխան իրավական ակտերի մշակում, ոստիկանության տեխնիկական միջոցների վերազինում և արդիականացում, անհրաժեշտ սարքերի ձեռքբերում, ոստիկանության ծառայողների վերպատրաստման ապահովում տարբեր երկրներում.

3) ***ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ,*** որով նախատեսվում են Հայաստանի Հանրապետության ճանապարհներին արագաչափ սարքերի և տեսախցիկների տեղադրման գործընթացի ընդլայնում, ոստիկանական կրթական համակարգի կատարելագործում, ոստիկանական նոր պարեկային ծառայության տեխնիկապես վերազինում.

4) ***ոստիկանության աշխատանքային պայմանների՝ բարելավմանն ուղղված բարեփոխումներ***, որով նախատեսվում են անհրաժեշտ գույքի և տրանսպորտային միջոցների թարմացում և ձեռքբերում, սերվերային համակարգերի ներդրում և գերատեսչական ցանցի ստեղծում, ոստիկանության ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավում.

5) ***ոստիկանությունում ծառայող անձանց սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ***, որով նախատեսվում են ոստիկանության ծառայողների համար որոշակի սոցիալական արտոնությունների իրավական ամրապնդում, ոստիկանության կենսաթոշակառուների բժշկական հաստատություններ և առողջարանային բուժման ուղեգրելու նոր հնարավորությունների ստեղծում:

5. Ծրագրով նախատեսված միջոցառումների ակնկալվող արդյունքներն են՝

1) ***նախկինում իրականացված բարեփոխումներով ձեռք բերված արդյունքների ամրապնդում ու դրա շարունակականության ապահովում՝*** ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների ընթացքում իրականացված բարեփոխումներով ձեռք բերված արդյունքը փաստեց դրա հետագա անհրաժեշտությունը: Առաջընթաց արձանագրելու հետ մեկտեղ, իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին ականատես լինելու ոստիկանության գործունեության ոլորտում առկա և խորհրդային տարիներից եկող բացերին: Դրական արդյունքներն ամրապնդելու, առկա բացերը վերացնելու և ոստիկանության գործունեության տարբեր ոլորտներում նոր եղանակների և մեթոդների ներդրման անհրաժեշտությունն ինքնին հանգում է բարեփոխումների շարունակական գործընթացին.

2) ***ոստիկանության գործունեության թափանցիկություն՝*** թափանցիկությունն առաջին հերթին ենթադրում է ոստիկանության գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում: Այսինքն, հասարակությունն այն դեպքերում,

երբ դա հնարավոր է և անհրաժեշտ, կարող է տեղեկություններ ստանալ ոստիկանության գործառույթների, դրանց առնչությամբ ընդունված իրավական ակտերի մասին և այլն: Ոստիկանության գործունեության թափանցիկության մասին խոսելիս՝ կարևոր է այն դիտարկել հաշվետվողականության հետ համատեղ: Տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ միայն «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ոստիկանության գործունեության նկատմամբ իրականացվող հսկողության կամ վերահսկողության, այլև հասարակության հետ փոխհամագործակցության միջոցով հաշվետվողականությունն ապահովելու մասին: Ոստիկանությունը, իր գործունեության ընթացքում առավել ակտիվ համագործակցելով ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ, ապահովելու է հաշվետվողականության մեխանիզմների լիակատար իրացումը.

3) ***ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական համակարգի կատարելագործում՝*** ամենօրյա խնդիրների իրականացման հետ մեկտեղ ոստիկանության ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն ոստիկանության գործառույթները կանոնակարգող իրավական դաշտի ուսումնասիրությունը, վերլուծությունը, առկա բացերի վերհանումը և համապատասխան լուծումների առաջադրումը.

4) ***ոստիկանության ծառայողների աշխատանքային պայմանների բարելավում՝*** ոստիկանության գործառույթներն արդյունավետ իրացնելու համար էական է նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը, համակարգչային համապատասխան սերվերային համակարգի ստեղծումը, շենքային պայմանների բարելավումը և այլն.

5) ***ոստիկանության ծառայողների լիազորությունների հստակեցում՝*** ոստիկանության ստորաբաժանումների վերակազմավորման, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների իրականացման արդյունքում նորաստեղծ ստորաբաժանումների գործառույթների հստակեցման անհրաժեշտություն է առաջանում: Այդ նպատակով

էական է ինչպես ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների հաստիքների վերաբաշխումը, այնպես էլ ամբողջ գործընթացի իրավական ամրագրումը.

6) ***հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով նոր մեթոդների ուսումնասիրում և ներդրում՝*** հանցագործությունների դեմ պայքարի իրականացման գործում առանցքային է առաջնահերթ ուղղությունների տարանջատումը, դրանք են՝ հանցագործությունների կանխարգելումը (նախականխումը), պայքարը, հետևանքների նվազեցումը և (կամ) վերացումը: Այս նպատակով ժամանակի պահանջն է տեղեկատվական հենքով ոստիկանության գործելակերպի ներդրումը: Տարիների փորձով ապացուցվել է մատնադրոշմների միջոցով անձի նույնացման և հանցագործությունների բացահայտելիության արդյունավետությունը: Այսօր, նույնականացման տարբեր մեթոդների շարքում, առանձնակիորեն կարևորվում է նաև դիմապատկերի միջոցով անձանց նույնացումը: Նշված նոր համակարգի ներդրումը ոստիկանությունում էապես կնպաստի հանցավորության դեմ պայքարի արդյունավետ իրականացման գործընթացին.

7) ***ոստիկանության ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանություն՝*** յուրաքանչյուր պետություն ուժեղ է այնքանով, որքանով իր քաղաքացիների համար կարող է ապահովել սոցիալական և իրավական կայուն երաշխիքներ: Տվյալ դեպքում մեր նորանկախ պետության կայացման ճանապարհին կարևոր է օրենքի պաշտպանի՝ ոստիկանի ծառայության պայմանների բարելավումը, սոցիալական երաշխիքների ապահովումը, ինչը թույլ կտա ոստիկանին առավելապես ներգրավվել գործառութային պարտականությունների պատշաճ իրականացմանը.

8) ***կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը՝*** ժամանակի հրամայականն է կոռուպցիայի դեմ պայքարը: Ոստիկանությունն իր ամենօրյա գործունեության ընթացքում որդեգրել է կոռուպցիայի դեմ պայքարի հստակ քաղաքականություն, որին

ուղղված հստակ քայլերը բարեփոխումների նախորդ փուլի արդյունքում տվել են իրենց դրական արդյունքը: Ներկայացված ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների իրականացումն ամբողջությամբ ենթադրում է նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 7-ի N 109 - Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Նպատակը	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարող գերատեսչությունը
1	2	3	4	5	6	7
ա. Կառուցվածքային և կազմակերպական ոլորտի բարեփոխումներ						
1.	Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնում	ՀՀ մարզերում համայնքային ոստի-կանության մոդելի ներդրում	1.1. ՀՀ մարզերում համայնքային ոստիկանության ուժերի վերահաշվարկ, կառուցվածքի հաստատում	2013 թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			1.2. համայնքային ոստիկանության հենակետերի ստեղծում, տրանսպորտային միջոցների և գույքի ապահովում	2013 թ.-2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
2.	Հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման	պարեկային ծառայու-թյան մոդելի ներդրում	2.1. պարեկային ծառայության պիլոտային ծրագրի ներդրման նպատակով ուսումնասիրությունների իրականացում	2013 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
	աշխատանքների արդյունավետության բարձրացում		2.2. համապատասխան իրավական ակտերի մշակում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			2.3. կազմ-հաստիքային փոփոխությունների իրականացում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			2.4. պարեկային ծառայության պիլոտային ծրագրի ներդրում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
3.	Ոստիկանության գործունեության թափանցիկության ապահովում, հանրության իրազեկ-վածության մակարդակի բարձրացում, մասնա-գիտացված կադրերի ընտրության հնարա-վորություն	ոստիկանության առանձին ստորա-բաժանումներում քաղաքացիական հատուկ ծառայության անցումը շարունակելը	3.1. ոստիկանության կենտրո-նական ապարատի ծառայու-թյունների, կրթահամալիրի և տարածքային մարմինների կանոնադրություններում փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև կազմ-հաստիքային փոփոխու-թյուններ կատարելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի հրամանների նախագծերի մշակում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			3.2. քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ

1	2	3	4	5	6	7
						ոստիկանություն ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ)
			3.3. քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների հաստիքացուցակի հաստատում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			3.4. քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ)
			3.5. մրցույթի թեստային փուլի հարցաշարերի և հարցազրույցի փուլի հարցերի պատրաստում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			3.6. մրցույթի թեստային փուլի հարցաշարերի և հարցազրույցի փուլի հարցերի պատրաստման համար համապատասխան համակարգչային ծրագրերի	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
			ստեղծում և ներդրում			
4.	Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուժերի և միջոցների արդյունավետ օգտագործում	ոստիկանության մար-մինների և տարածքային ստորաբաժանումների օպտիմալացում	4.1. ուսումնասիրություններ կատարելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծում	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			4.2. ոստիկանության տարած-քային ստորաբաժանումների ծառայողների հաստիքների վերաբաշխում	2013 թ.- 2014 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
5.	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկում և զարգացում	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և սպասարկման ստորաբաժանման ստեղծում	5.1. տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և սպասարկման ստորաբաժանում ստեղծելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			5.2 . տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և սպասարկման ստորաբաժանման գործա-ռույթները և կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
6.	Հայաստանի Հանրապետության ոստիկանության կադրային աշխատանքների կատարելագործում	Հայաստանի Հանրապետության ոստիկանության կադրային քաղաքականության օպտիմալացում, արդյունավետ իրականացում	6.1. «Կադրեր» ինֆորմացիոն համակարգի վերազինման և արդիականացման նպատակով համապատասխան ծրագրի մշակման համար մրցույթի կազմակերպում և տեխնիկական առաջադրանքի մշակում	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			6.2. համապատասխան համակարգչային տեխնիկական միջոցներով վերազինում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			6.3. ոստիկանության կադրային ստորաբաժանումների հետ համակարգչային ցանցի ստեղծում	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
բ. Հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ						
7.	Հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքների բարելավում	տեխնիկական միջոցների ներդրմամբ հասարա-կական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովում	7.1. ոստիկանությունում «TETRA» թվային ռադիոկապի համակարգի ներդրում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			7.2. հասարակական վայրերում տեսադիտման համակարգի զարգացում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ

1	2	3	4	5	6	7
					միջոցներ	ոստիկանություն
			7.3. Երևան քաղաքի և մարզային վարչություններում օպերատիվ արձագանքման կենտրոնների ստեղծում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			7.4. օպերատիվ-ծառայողական մեքենաների՝ համակարգչային տեխնիկական միջոցներով վերազինում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
8.	Առանձին ոլորտներում ոստիկանության պատասխանատվու-թյան հստակեցում	ինկասացիոն ծառայությունների մատուցման և պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրության ոլորտներում ոստիկանության լիազորությունների հստակեցում	8.1. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորման կարգը, լիցենզիայի ձևը և ինկասացիոն կազմակերպության մասնագի-տացված աշխատողների մասնագիտական որակավորման և մասնագիտական համապա-տասխանության ստուգման կարգը հաստատելու մասին» N 2302-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
			8.2. ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապե-տությունում պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 2071-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ կառավարությանն

1	2	3	4	5	6	7
			մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում			առընթեր պետական եկամուտների կոմիտե
9.	Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելում	թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխ-արգելման ոլորտում ընդգրկված մարմինների նյութատեխնիկական բազայի բարելավում	Երևանում հետախույզ-պահնորդական շների բուծման և վարժեցման ժամանակակից կենտրոնի ստեղծում	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
10.	Հանցագործությունների բացահայտման աշխատանքների արդյունավետության բարձրացում	փորձաքննությունների կատարման արդյունավետության բարձրացում	10.1. հանրապետական գնդակապարկուճադարանի գործունեության համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			10.2. հատուկ հետազոտությունների բաժնի տեխնիկական վերազինում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			10.3. պայթյունատեխնիկական լաբորատորիայի ստեղծում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
11.	Հանցագործությունների նախականխման, կանխման և	հանցագործությունների նախականխման, կանխման և	11.1. Հայաստանի Հանրապե-տության ոստիկանությունում օպերատիվ և վարչական	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ

1	2	3	4	5	6	7
	բացահայտման աշխատանքների արագ և արդյունավետ իրականացում	բացահայտման աշխատանքներում օպերատիվ-հետա-խուզական գործունեություն իրականացնող մար-մինների աշխատանքի արդյունավետության բարձրացում	գործունեություն իրականացնող ստորաբաժանումների վարույթներում առկա հաշվառման գործերի և հաշվառումների թվայնացման իրավական կարգավորում			ոստիկանություն
			11.2. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում օպե-րատիվ և վարչական գործու-նեություն իրականացնող ստո-րաբաժանումների վարույթներում առկա հաշվառման գործերի և հաշվառումների թվայնացում, տեղեկատվական շտեմարանի ստեղծում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			11.3. օպերատիվ հաշվառման գործերի նկատմամբ էլեկտրոնային վերահսկողության սահմանում	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
12.	Հանցավորության դեմ պայքարի արդյունավետ աշխատանքի	Հանցավորության դեմ պայքարի ոլորտում փոխհա-մագործակցության	12.1. ավագ դպրոցներում դպրոցական տեսուչների ներդրում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
	կազմակերպում	կատարելագործում, աշխատանքային նոր մեթոդների և ձևերի ներդրում				ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ մարզպետարաններ հասարակական կազմակերպությունն եր(համաձայնությամ բ)
			12.2. շեղվող վարքագիծ դրսևոր-ող անչափահասների սոցիա-լական վերականգնողական համայնքային կենտրոնների ցանցի ընդլայնում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն միջազգային հասարակական կազմակերպությունն եր(համաձայնությամ բ)
			12.3. ինտերնետ և կապի ծառայություն մատուցող օպերատորների և իրավապահ մարմինների միջև փոխհամագործակցության կանոնակարգում, հուշագրերի կնքում	2013-2014 թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
			12.4. տնտեսավարող սուբյեկտների հետ հանցավորության դեմ պայքարում համագործակցության կատարելագործում, համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
13.	Համացանցում անօրինական բովանդակությամբ տեղեկատվության արագ և օպերատիվ հայտնաբերում և արձագանքում	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում համացանցում անօրինական բովանդակությամբ տեղեկատվության մոնիթորինգի կենտրոնի հնարավորությունների ընդլայնում	համացանցում անօրինական բովանդակությամբ տեղեկատվության մոնիթորինգի կենտրոնի հզորացման և հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
14.	Միջազգային կառույցների, օտարերկրյա պետությունների ոստիկանական մարմինների հետ փոխհամագործակցության արդյունավետության բարձրացում	միջազգային կառույցների, օտարերկրյա պետությունների ոստիկանական մարմինների հետ փոխհամագործակցության ակտիվացում, աշխատանքային նոր մեթոդների և ձևերի ներդրում	Ինտերպոլի հեռահաղորդակցման I-24/7 համակարգին Հայաստանի Հանրապետության իրավապահ և շահագրգիռ այլ գերատեսչությունների ինտեգրման հնարավորության ընձեռում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
15.	Հայաստանի Հանրապետությունում	Հայաստանի Հանրապե-	Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ	ՀՀ կառավարությանն

1	2	3	4	5	6	7
	Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյում գործունեության կատարելագործում	տությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյում գործունեության համապատասխանեցում միջազգային պահանջներին	կենտրոնական բյուրոյում տեղեկատվական-վերլուծական նոր համակարգի մշակում և ներդրում		չարգելված միջոցներ	առընթեր ՀՀ ոստիկանություն «Երևանի մաթեմատիկական մեքենաների ինստիտուտ» ՓԲԸ
16.	Դիմապատկերի միջոցով անձանց նույնացման եղանակով հանցագործությունների բացահայտման և հետախուզվողների հայտնաբերման աշխատանքների արդյունավետության բարձրացում	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում դիմապատկերի միջոցով անձանց նույնացման համակարգի ներդրում	16.1. գոյություն ունեցող նմանատիպ մոդուլների ուսումնասիրություն և ձեռքբերում	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			16.2. դիմապատկերի նույնացման մոդուլի կիրառմամբ համակարգի ստեղծում և ներդրում	2014 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
17.	Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի աշխատանքների համապատասխանեցում արդի պահանջներին	Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի արխիվային գործերի թվայնացում	17.1. արխիվային փաստաթղթերի թվայնացման և թվայնացված տեղեկատվության պահպանման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերում	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային արխիվ (համաձայնությամբ)
			17.2. ինֆորմացիոն կենտրոնի թվայնացված արխիվային փաստաթղթերի էլեկտրոնային	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ

1	2	3	4	5	6	7
			շտեմարանի աշխատանքի ծրագրային ապահովում		միջոցներ	ոստիկանություն ՀՀ ազգային արխիվ (համաձայնությամբ)
			17.3. ինֆորմացիոն կենտրոնի արխիվային փաստաթղթերի թվայնացում և թվայնացված տեղեկատվության ինդեքսավորում՝ լրացուցիչ տեղեկության մուտքագրում	2014 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային արխիվ (համաձայնությամբ)
18.	Պետական մարմիններում առկա տեղեկատվության արդյունավետ օգտագործում	միջգերատեսչական ցանցի նախագծում և կառուցում	18.1. իրավապահ մարմինների և շահագրգիռ այլ գերատեսչու-թյունների տվյալների բազաները մեկ միջավայրում ինտեգրում, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արդարադա-տության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)

1	2	3	4	5	6	7
						ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
			18.2. անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերում, տեղադրում և կարգաբերում: Միասնական տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման ստեղծում, ներդրում և շահագործում	2014 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արդարադատության նախարարություն

1	2	3	4	5	6	7
						ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
19.	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում փաստաթղթաշրջանառության արագ կազմակերպում, համապատասխանեցում արդի պահանջներին	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրում	19.1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության անցնելու իրավական կարգավորում	2013 թ.- 2014 թ.	ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			19.2. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում էլեկտրո-	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ

1	2	3	4	5	6	7
			նային փաստաթղթաշրջանա-ռության համակարգի ներդրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերում, տեղադրում և կարգաբերում, անձնակազմի ուսուցում, համակարգի ներդրում և շահագործում		միջոցներ	ոստիկանություն
20.	Հայաստանի Հանրա-պետության ոստիկանության գործունեության թափանցիկության ապահովում	Հայաստանի Հանրա-պետության ոստիկանության մարմիններում և ստորաբաժանումներում քաղաքացիների դիմումների և բողոքների հաշ-վառման և վերահսկողության բարելավում	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում և ենթակա ստորաբաժանումներում քաղաքացիների դիմում-բողոքների հաշվառման և վերահսկողության միասնական համակարգի ստեղծում, համակարգչային ծրագրի մշակում և ներդրում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
21.	Ծառայողամարտական պատրաստականության համակարգի կատարելագործում	Հայաստանի Հանրա-պետության ոստիկանության ծառայողների ծառա-յողամարտական և ֆիզիկական պատրաստա-կանության մակար-դակի բարձրացում	21.1. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում անցնելու կարգը հաստատելու մասին» N 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2013 թ. 1-ին կիսամյակ	ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
			21.2. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների ծառայողամարտական պատրաստականության հրահանգը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների ֆիզիկական պատրաստականության հրահանգը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի հրամանների նախագծերի մշակում	2013 թ. 2-րդ կիսամյակ	ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
գ. Ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ						
22.	Ճանապարհներին երթևեկության վերահսկողության կատարելագործում	ճանապարհատրանսպորտային պատահարների թվի նվազեցում, ոստիկանվարորդ շփման կրճատում	22.1. Երևան քաղաքում նախատեսված քանակի արագաչափ սարքերի և խաչմերուկներում տեսախցիկների տեղադրում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			22.2. միջպետական նշանակության ճանապարհներին	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ

1	2	3	4	5	6	7
			նախատեսված քանակի արագաչափ սարքերի տեղադրում		միջոցներ	ոստիկանություն
23.	Ճանապարհապարեկային ծառայության կատարելագործում	վարչական պրակտիկայի կիրարկման շարունակական գործընթացի ապահովում	23.1. ճանապարհապարեկային ծառայության պարեկային մեքենաների կահավորում համապատասխան ծրագրերով հագեցած դյուրակիր համակարգիչներով	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			23.2. ճանապարհապարեկային ծառայության տեսուչների կողմից վարչական իրավախախտման արձանագրությունների կազմում համակարգչի միջոցով, տվյալների մուտքագրում վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարան	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
24.	Ճանապարհապարեկային ծառայության կարգախմբերի նկատմամբ վերահսկողության ուժեղացում	ճանապարհային ոստիկանության ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժի վերահսկում, ուժերի և միջոցների արդյունավետ կառավարում	ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում ընդհանուր նշանակության փաթեթային ռադիոկապի (GPRS) համակարգով տեղորոշիչ ծրագրի գործարկում	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
25.	Ճանապարհային ոստիկանության կողմից քաղաքացիների սպասարկման արդյունավետության բարձրացում	ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերում տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողությունների իրականացման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման գործընթացի կատարելագործում	25.1. հաշվառման-քննական ստորաբաժանումների վարչական շենքերի և քննական ավտոդրոմի շահագործման հանձնում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			25.2. հաշվառման-քննական ստորաբաժանումներում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողության իրականացում «հոսքագծի» եղանակով	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			25.3. հաշվառման-քննական ստորաբաժանումներում մեկ աշխատանքային օրվա ընթացքում վարորդական վկայականների հատկացում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
26.	Հայաստանի Հանրապետության ոստիկանության պահպանության ոլորտում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարելավում	Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանման ոլորտում առավել առաջադիմական մեթոդների և ձևերի ներդրում	ՀՀ ոստիկանության պետական պահպանման և ահազանգման տեխնիկական ժամանակակից սարքավորումների ձեռքբերում և ներդրում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
27.	Օտարերկրյա պետություններում գտնվող անձանց ՀՀ քաղաքացիություն շնորհելուց հետո Հայաստանի Հանրապետություն	Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով Հայասատանի Հանրապետության քաղաքացիություն շնորհված և դեռևս	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
	մուտք գործելու գործընթացի պարզեցում	շնորհված և դեռևս Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր չստացած անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետություն առանց մուտքի վիզայի այցելության ռեժիմի կիրառման ապահովում	Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր չստացած անձանց տվյալները Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ փոխանցելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցառումների իրականացում			
28.	Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցակետերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների իրացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացում	Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցակետերում, անհրաժեշտության դեպքում, տեղում անձնագրերի վավերականության ժամկետների երկարաձգման հնարավորության նախատեսում	ՀՀ սահմանային անցակետերում գործող ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանումներում անրաժեշտ տեխնիկական միջոցների և ծրագրերի մշակում ու շահագործում	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
29.	Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար	ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար դիմած անձանց՝ իրենց դիմումի քննարկման	ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար դիմած անձանց էլեկտրոնային եղանակով (SMS կամ էլեկտրոնային	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
	դիմող անձանց իրա-զեկման աշխատանք-ների արդյունավետու-թյան բարձրացում	ընթացքի և ընդունվող որոշումների վերաբերյալ տեղեկացնելու ընթացակարգի պարզեցում	փոստի միջոցով) դիմումի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար անհրաժեշտ համակարգի գործարկմանն ուղղված տեխնիկական հագեցվածության ապահովում, համակարգի շահագործում			
դ. Հայաստանի Հանրապետության ոստիկանության աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված բարեփոխումներ						
30.	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում գերատեսչական համակարգչային ցանցի համապատաս-խանեցում արդի պահանջներին	Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում ժամանակակից գերատեսչական համակարգչային ցանցի կատարելագործում	30.1. ՀՀ ոստիկանության կենտրոնական հանգույցի սերվերային տարածքի կահավորում՝ մուտքի անվտանգության համակարգի տեղադրում, հրդեհաշիջման և ջերմաստիճանային ռեժիմի ավտոմատ կարգավորման համակարգերի ներդրում, մշտական անխափան էլեկտրասնուցման համակարգի ներդրում	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			30.2. Հայաստանի Հանրապե-տության ոստիկանության կենտրոնական հանգույցի սեր-վերների հզորացում և ցանցային անվտանգության բազմագործառութային ծրագրային ապարատային	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

1	2	3	4	5	6	7
			համակարգի ներդրում			
			30.3. Հայաստանի Հանրապե-տության ոստիկանության մարմիններում և ստորաբա-ժանումներում սերվերային համակարգի ներդրում	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			30.4. անհրաժեշտ ծրագրային փաթեթների ձեռքբերում և ներդրում	2013 թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
31.	Հայաստանի Հանրապետության ոստիկանության մար-միններում և ստորաբաժանումներում համակարգչային հագեցվածության բարելավում	Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններում և ստորաբաժանումներում համակարգչային հագեցվածության և ծրագրային ապահովման համապա-տասխանեցում արդի պահանջներին	31.1. Հայաստանի Հանրապե-տության ոստիկանության մարմիններում և ստորաբաժանումներում տեղային ենթացանցերի նախագծում, ստեղծում և համակցում համակարգչային գերատեսչական ցանցին	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			31.2. Հայաստանի Հանրապե-տության ոստիկանության մարմիններում և ստորաբա-ժանումներում գերատեսչական ցանցին համակցված համակարգչային աշխատատեղերի ստեղծում և համալրում, համակարգչային հագեցվածության ապահովում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
32.	Հայաստանի Հանրապետության	Հայաստանի Հանրապետության	32.1. հեռուստատեսության արդի պահանջներին	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ	ՀՀ կառավարությանն

1	2	3	4	5	6	7
	ոստիկանության գործունեության վերաբերյալ հանրության իրազեկվածության անընդհատ և լիարժեք ապահովում	ոստիկանության հասարակական կարգի և լրատվության վարչության աշխա-տանքային միջոցների բարելավում	համապատասխան նոր տեխնիկական միջոցների ձեռքբերում (մոնտաժային համակարգիչ, տեսախցիկներ, բարձրախոսներ, լուսային համակարգ)		չարգելված միջոցներ	առընթեր ՀՀ ոստիկանություն
			32.2. ձայնամեկուսացման և լուսային համակարգով հագեցված հաղորդավարական նոր տաղավարի ստեղծում ու կահավորում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
33.	Հայաստանի Հանրա-պետության ոստիկանության ծառայողների համար արդի պահանջներին համապատասխան շենքային պայմանների ստեղծում	Հայաստանի Հանրապետության ոստիկանության կենտրոնական ապարատի և տարած-քային ստորաբաժանումների շենքային պայման-ների բարելավում	33.1. անձնագրային և վիզաների վարչության նոր վարչական շենքի կառուցման աշխատանքների կազմակերպում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			33.2. բժշկական վարչության և ենթակա ստորաբաժանումների զբաղեցրած տարածքների շենքային պայմանների ուսումնասիրում, ընթացիկ և շինարարական-վերանորոգման աշխատանքների կազմակերպում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			33.3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Քանաքեռ-	2013 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ օրենսդրությամբ չարգելված	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ

1	2	3	4	5	6	7
			Ջեյթունի բաժնի վերանորոգման աշխատանքների կազմակերպում		միջոցներ	ոստիկանություն
			33.4. Հայաստանի Հանրապե-տության ոստիկանության Կենտրոնականի բաժնի նոր վարչական շենքի կառուցա-պատման աշխատանքների կազմակերպում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
			33.5. ձերբակալվածների պահման վայրերի շենքային պայմանների ուսումնասիրում, ընթացիկ և շինարարական-վերանորոգման աշխատանքների կազմակերպում	2013 թ.- 2014 թ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
ե. Ոստիկանությունում ծառայող անձանց սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ						
34.	Ոստիկանության ծառայողների սոցիալական վիճակի բարելավում	Ոստիկանության ծառայողների համար գույքահարկի գծով արտոնությունների սահմանում	«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
35.	Ոստիկանության կենսաթոշակառուներ	Ոստիկանության կենսաթոշակառուների	35.1. ոստիկանության կենսաթոշակառուներին և	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն

1	2	3	4	5	6	7
	ի համար սոցիալական արտոնությունների սահմանում	առողջարանային բուժման ապահովում	նրանց ընտանիքի անդամներին այլ բժշկական հիմնարկներ ուղեգրելու հնարավորությունների ուսումնասիրում և կանոնակարգում			առընթեր ՀՀ ոստիկանություն
			35.2. ոստիկանության կենսա-թոշակառուներին առողջարանային բուժման ուղեգրերի տրամադրման կանոնակարգում	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
36.	Ոստիկանության ծառայողների համար սոցիալական արտոնությունների սահմանում	Ոստիկանության որոշակի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար ծառայությանն առնչվող որոշակի ծախսերի փոխհատուցում	օպեր-լիազորների, քննիչների և տեղամասային տեսուչների (համայնքային ոստիկանների) անձնական օգտագործման ավտոտրանսպորտային միջոցների, բջջային հեռախոսակապի ծախսերի մասնակի փոխհատուցման համակարգի ներդրում	2013-2014 թթ.	ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ